ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8 Ա
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi@alaverdi.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հունվարի 2012 թվականի N 12-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ 350.0 ՔՄ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 239.0 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՄՈՎՍԵՍ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 12.08.2010թ. N 1004-Ն որոշումով և հաշվի առնելով, որ նշված հողամասը չի գտնվում ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ալավերդի քաղաքի Խուդյակով փողոցի թիվ 50 հասցեում գտնվող՝ Մովսես Ստեփանի Կիրակոսյանին (ծնված 22.07.1935թ.) սեփականության իրավունքով պատկանող 350.0 քմ օրինական տնամերձ հողամասում գտնվող բնակելի տանը կից 1996թ. ինքնակամ կառուցված նկուղային հարկից 60.2 քմ մակերեսով, 1-ին հարկից 61.4 քմ մակերեսով շինությունները, ավտոտնակի վրա կառուցված ծածկը և հողամասում կառուցված մառանը, ինչպես նաև օրինական հողամասին կից ավել օգտագործվող 239.0 քմ մակերեսով սահմանազատված հողամասը օրենքի ուժով համարել Մ. Կիրակոսյանի սեփականությունը՝ որպես սեփական գույք:
2. Նշված սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:

Հիմք՝ Մ. Կիրակոսյանի դիմումը, ԱԳԿՊԿ Ալավերդու տարածքային ստորաբաժանման ղեկավարի 05.12.2011թ. թիվ ԴԹ-3289 գրությունը, «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ա. ՎԱՐՈՍՅԱՆ

2012թ. հունվարի 26
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8 Ա
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi@alaverdi.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հունվարի 2012 թվականի N 11-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. № 912-Ն որոշման 34-րդ, 47-րդ կետերով և հաշվի առնելով, որ Մեխակ Դավթյանը ընդունել է ավտոտնակը և նրա սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը և վճարել է օրինականացման համար սահմանված վճարները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ալավերդի քաղաքի Զրավազան փողոցի թիվ 3 Դ հասցեում գտնվող քաղաքապետի 24.10.2011թ. թիվ 253-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված 39.48 քմ մակերեսով ավտոտնակը՝ 43428 (քառասուներեք հազար չորս հարյուր քսանութ) դրամ և նրա սպասարկման համար զբաղեցրած 39.48 քմ հողամասը՝ 31979 (երեսունմեկ հազար ինը հարյուր յոթանասունինը) դրամ արժեքով ուղղակի վաճառքով օտարել Մեխակ Դավթյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և սպասարկման համար զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

Հիմք՝ Քաղաքապետի 24.10.2011թ. թիվ 253-Ա և 08.11.2011թ. թիվ 264-Ա որոշումները, վճարման անդորրագրերը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

2012թ. հունվարի 26
ք. Ալավերդի